

նոցա, եւ մնան ունայն: Եւ կայ ի գիրս թէ ի
 Քամայ ցեղէն են. վասն որոյ եւ զանէծս նորա
 160 ընկալան. եւ չկայ աշխարհս ազգ չար եւ ա-
 պիրատ, այլ եւ անարգ եւ տկար. զի ոչ թէ
 կերակուր չունին, այլ եւ հանդերձ, վերար-
 կու, գտակ կամ փօսդալ, տուն կամ բնա-
 կութիւն կամ այլ ինչ փառք. այլ իբրեւ զխոզ
 165 ի գետնի նստին եւ ելնեն, ուտեն եւ ննջեն,
 դարսիք, դգալ բնաւ չունին, այլ ի ազոտոս եւ
 անլուայ ամանէ ինչ զազիր ուտեն ամէն օր,
 եւ բնաւ չլուանան: Եւ տունք նոցա բոլորեալ
 յեղեգէ եւ ցանկէ՝ որպէս փարախք ոչխա-
 170 րաց, վերեն բաց եւ ներքեն աւազ, եւ
 ինքեանք մերկ. այլք ի ծերպս վիմաց եւ ի
 քարաթուխս եւ յաւաղս բնակեն. բայց զողու-
 թիւն, հարամութիւն, յափշտակութիւն յա-
 փուց չթողուն. եւ զոր յայլ աշխարհս տա-
 175 սանորդս տան, նոքա հինգէն մին տան. վասն
 որոյ զրկեալ են ամենայն բարեաց՝ հոգոյ եւ
 մարմնոյ եւ ի շնորհաց Որդւոյն Աստուծոյ:

ՃԱՆԱՊԱՐՀ Ի ԳԱՀԻՐԷՆՆԵՆ ՅԵՐՈՒՍԱԳԷՄ

Յետ այսր ամենայնի պատրաստեցաւ
 Մսրայ խազնան. եւ խօնտիքարէն եկաւ գէր-
 պապ, խաֆդան եւ հրաման մեծ պարոնի մի,
 որ կոչէր Սուլէյման աղայ: Եւ էր նա սիրելի
 5 խուլումճիպաչի Իպրահիմչային. զոր իբրեւ
 զիտաց՝ խնդութեամբ զնաց եւ շնահաւորեց.
 եւ նա ասաց. Սիրելի իմ, ի՞նչ մուրատ ու-

158 ունայն: — 166 դքալէ: — 172 քարազուրս:
 — 177 յորդոյն: